ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ («ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՈԴՈՒԼԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԴԴ-ՄԱԾՁԲ-26/11»

ք. Երևան «25» փետրվարի 2026թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մանուկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների («Էլեկտրոնային դատավարություն» քաղաքացիական մոդուլի սպասարկման ծառայությունների) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 34 500 000 (երեսունչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ 05.01.2026թ-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **17** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դպրական դեպարտամենտ	***«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 25փ. 25տ.
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01555207
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1570003653770100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Ղեկավար՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Ա. Մանուկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 25 » փետրվարի 2026թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-26/11» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության								
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը*
1	72261160/5	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ («Էլեկտրոնային դատավարություն» քաղաքացիական մոդուլի (https://cabinet.court.am և https://cabinet.armlex.am) սպասարկման ծառայություններ)	«Էլեկտրոնային դատավարություն» քաղաքացիական մոդուլի («ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹ») (https://cabinet.court.am և https://cabinet.armlex.am) սպասարկման ծառայություններ (կից՝ տեխնիկական բնութագիրը)	դրամ	34 500 000	1	ք. Երևան, Կորյունի 17	05.01.2026թ-ից մինչև 29.12.2026թ. ներառյալ

** Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ 05.01.2026թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ձեռքբերվող ծառայության
«Էլեկտրոնային դատավարություն» քաղաքացիական մոդուլը (այսուհետ՝ Մոդուլ) աշխատանքն ապահովվում է Դատական դեպարտամենտում տեղաբաշխված ոչ ավել, քան 2 հատ ֆիզիկական սերվերների և 17 հատ վիրտուալ սերվերների (այսուհետ՝ Սերվերներ) միջոցով: Մոդուլում անընդհատ մոտքագրվող տվյալների աճով պայմանավորված Սերվերների քանակը կարող է ավելանալ: **Ապահովել Մոդուլի անխափան աշխատանքը՝ Դատական դեպարտամենտի սերվերային հանգույցում տեղադրված սարքավորումների անխափան աշխատանքի դեպքում: Կատարել համապատասխան ծրագրային շտկումներ և զարգացումներ (փոփոխություններ) ՀՀ օրենսդրության պահանջներին և Դատական դեպարտամենտից ստացված հանձնարարականներին համապատասխան՝ եթե չկա անհնարինություն:** **Կատարել Դատական դեպարտամենտի կողմից համակարգին առաջադրված նոր պահանջների համատեղ քննարկում, դասակարգում, առաջնահերթության սահմանում, իրականացման ժամկետների նախանշում և հնարավորության դեպքում իրականացում:** **Պետք է ապահովել դատարանի աշխատակիցների մուտքը Մոդուլի ներքին տիրույթ (https://cabinet.court.am)՝ մուտքային անունով և գաղտնաբառով կամ «Եսեմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով: Այլ անձանց համար մուտքը Մոդուլի արտաքին տիրույթ (https://cabinet.armlex.am)՝ մուտքային անունով և գաղտնաբառով կամ «Եսեմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով:** Մոդուլի միջոցով պետք է ապահովվեն Առաջին ատյանի ընդհանուր իրավասության, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական և Վճռաբեկ դատարանների քաղաքացիական գործերի՝ էլեկտրոնային եղանակով հարուցումը, քննությունը, լուծումը և բողոքարկումը՝ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և այլ կիրառելի իրավական ակտերի: Մոդուլ մուտք եղած հայցադիմումների, վերաքննիչ ու վճռաբեկ բողոքների, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում միջնորդությունների ավտոմատ բաշխումը պետք է իրականացվի «Դատական համակարգ» համակարգչային ծրագրի (CAST) միջոցով:

Մոդուլի օգտատերերի իրավասությունների բաշխման ենթահամակարգ, անձնական կաբինետում տվյալ օգտատիրոջը առնչվող գործերի հասանելիության ապահովում, այլ գործերի վերաբերյալ գաղտնիության ապահովում:

Իրավասությունների տրամադրման համակարգ: Ֆիզիկական, իրավաբանական անձանց, փաստաբանների, դատարանների գրասենյակների աշխատակիցների, դատավորների և դատավորների կազմերի համար օգտահաշիվների ստեղծման և դրանց իրավասությունների կառավարման համակարգ:

Մոդուլի կողմից դատական ակտերի և միջնորդությունների ինքնաշխատ գեներացում, անհրաժեշտության դեպքում կցվող փաստաթղթերում առկա էլեկտրոնային ստորագրության առկայության ստուգում:

Փաստաթղթերի ռեեստրի մոդուլ: Փաստաթղթերի ներբեռնում, վերբեռնում, ստեղծում, իրավասու անձանց համար հասանելիություն, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերի ձևանմուշների առկայություն և դրանց օգտագործում, մուտքագրված տվյալների հիման վրա փաստաթղթերի ինքնաշխատ գեներացում:

<u>Ծանուցումների մոդուլ</u>

- Ինտեգրացիա Հայփոստի Հիբրիդփոստ համակարգի հետ: Հիբրիդփոստ ծանուցումների ուղարկում և դրանց հետագա կարգավիճակների արտացոլում համակարգի մեջ:
- Ինտեգրացիա Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների «Ազդարար» համակարգի հետ: Հրապարակային և անհատական ծանուցումների ուղարկում և դրանց հետագա կարգավիճակների արտացոլում «Ազդարար» համակարգում:
- Ներքին համակարգային ծանուցումների համակարգ, որի մեջ ներառվում է նաև համակարգի կողմից ինքնաշխատ կերպով ծանուցումների ստեղծում և ուղարկում:
- Էլեկտրոնային փոստին ծանուցում:

Ինտեգրացիա ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և ՀՀ բնակչության պետական ռեգիստրի հետ, ֆիզիկական և իրավաբանական անձանց նույնականացում:

Անձի անձնական կաբինետի մոդուլ, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից ֆիզիկական անձին պատկանող ընկերությունների նույնականացում և համապատասխան օգտահաշիվների ստեղծում, ընկերության տնօրենի համար հնարավորություն մուտք գործելու և կառավարելու իրեն պատկանող իրավաբանական անձի կաբինետը:

Ինտեգրացիա «Դատական համակարգ» համակարգչային ծրագրի և «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի հետ:

Պետական տուրքերի վճարումների համակարգ e_payments և e_treasurey համակարգերի միջոցով: Մոդուլ, որը թույլ է տալիս գրասենյակի աշխատակցին ստուգելու վճարված պետական տուրքերի հավաստիությունը:

Ինտեգրացիա ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կատարողական թերթերի՝ ces.armlex.am համակարգի հետ:

Այլ գերատեսչությունների հետ տեղեկատվությունների փոխանակման և փոխգործելիության ենթահամակարգեր (ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության էլեկտրոնային համակարգ, ՀՀ ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային համակարգ, ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային համակարգ, Ֆինանսական համակարգի հաշտարարի էլեկտրոնային հարթակ):

Գործում մասնակից չհանդիսացող փաստաբանի կամ ներկայացուցչի՝ գործին ներգրավվելու դիմումի ներկայացման հնարավորությունն ապահովող մոդուլ:

Ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձի հայցադիմում ներկայացնելու մոդուլ:

Դատական նիստերի նշանակման և կառավարման մոդուլ:

Մոդուլի սերվերներում տեղադրված ծրագրերի թարմացում և կարգաբերում, ինչպես նաև անհրաժեշտ ծրագրերի տեղադրում և թարմացում, Սերվերների հսկում (մոնիտորինգ), Սերվերների գերբեռնվածության ախտորոշում, Մոդուլի աշխատանքն ապահովող սարքավորումների անսարքության հայտնաբերում, առաջացած խնդիրների լուծման տարբերակների խորհրդատվության տրամադրում:

Մոդուլի աշխատանքն ապահովող, ինչպես նաև նոր սերվերների և սարքավորումների ծրագրային ապահովում և կարգաբերում՝ ապահովելով փոխգործակցումը գործող սերվերների միջև:

Սերվերներում առկա տեղեկատվության ամբողջականության և անվտանգության ապահովում, ինչպես նաև անվտանգության ապահովման կազմակերպման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:

Մոդուլի տվյալների բազաների պահուստային պատճենների և բազաներին կից ֆայլերի ստեղծում (պահուստային սերվերներում և տրամադրված այլ կրիչներում՝ առնվազն շաբաթական կտրվածքով), տվյալների բազաների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում տվյալների բազաների և բազաներին կից ֆայլերի վերականգնում պահուստային պատճեններից:

Տվյալների բազաների օպտիմիզացման խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն:

Վերարտադրման (ռեպլիկացիաների) ստուգում:

Պատվիրատուի պահանջով Մոդուլում պարբերաբար առաջացող խոտանված տվյալների մշակում և հեռացում:

Անհրաժեշտության դեպքում տվյալների բազայում իրականացվող հարցումների օպտիմալացում:

Մոդուլի ծրագրային թերությունների և բացթողումների շտկում:

Սերվերների անվտանգության ապահովում՝ բացառելով չարտոնված մուտքերի հնարավորությունը, բազմաշերտ ցանցային անվտանգություն (Firewall), ցանցային ներխուժման փորձերի ախտորոշում և արգելափակում ավտոմատացված համակարգի միջոցով:

Անհրաժեշտության դեպքում կատարել Սերվերների ծրագրային ապահովման (օպերացիոն համակարգերի, Firewall և այլ անհրաժեշտ ծրագրերի) պարբերական թարմացում:

Սերվերների հետ առաջացած ծրագրային խնդիրները պետք է լուծվեն անհապաղ, ծայրահեղ դեպքում ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում՝ խնդրի կարգավորման մասին անմիջապես իրազեկելով պատվիրատուին:

Ծրագրին անվտանգ հեռակա հասանելիության ապահովում համապատասխան Վիրտուալ Մասնավոր Ցանցի (ՎՄՑ) միջոցով, անհրաժեշտության դեպքում նոր ՎՄՑ մոդուլների նախագծում՝ հիմնվելով Դատական դեպարտամենտի որոշակի ցանցային պահանջների վրա:

Պատվիրատուի պահանջով դրանում նշված օրվա դրությամբ Մոդուլում առկա վերծանումների (log) տրամադրում:

Պատվիրատուի և սպասարկողի միջև փաստաթղթաշրջանառությունը, մասնավորապես՝ պատվիրատուի հանձնարարությունները և դրանց ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով:

Պատվիրատուի հանձնարարությունները դասակարգել հետևյալ սկզբունքով՝

- ***ՀՐԱՏԱՊ (խնդիրներ, որոնք կհանգեցնեն Մոդուլի, Մոդուլի ենթահամակարգերի կամ վերջինիս բաղկացուցիչ մասերից որևէ մեկի բնականոն աշխատանքի խափանմանը),***
- ***ԸՆԹԱՑԻԿ (խնդիրներ, որոնք չունեն որևէ ազդեցություն Մոդուլի աշխատանքի որակի վրա):***

Պատվիրատուի հանձնարարականների համաձայն, ՀՐԱՏԱՊ ծրագրային շտկումները և փոփոխությունները, պետք է կատարել անհապաղ:

ԸՆԹԱՑԻԿ ծրագրային շտկումները և փոփոխությունները իրականացնել կատարման ժամկետները համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

Սպասարկողը պատվիրատուին է փոխանցում Ծրագրի սպասարկման ընթացքում ի հայտ եկած խնդիրների և կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն (վիճակագրություն), ներառյալ՝ կատարված աշխատանքների նկարագրությունը:

Սպասարկողը պարտավոր է Պատվիրատուին հանձնել Մոդուլի աշխատանքին առնչվող բոլոր գաղտնաբառերը:

Սպասարկողը պարտավոր է Մոդուլի աշխատանքին առնչվող ցանկացած գաղտնաբառի(երի) փոփոխությունը(երը) կատարել միայն պատվիրատուի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ՝ Դատական դեպարտամենտի Համակարգչային ծառայության վերահսկողությամբ, որից հետո անմիջապես գաղտնաբառը(երը) փոխանցվում է պատվիրատուին:

Սպասարկողը Մոդուլի աշխատանքն ապահովող ծրագրերի, ծրագրային կոդերի փոփոխություններ և սարքավորումների կարգաբերումներ թույլատրող տիրույթ մուտք է գործում միայն նախապես պատվիրատուի հետ համաձայնեցված դեպքերում և կարգով:

Պայմանագիրը կնքելուց հետո, Սպասարկողը պարտավոր է Պատվիրատուին հանձնել Մոդուլին վերաբերելի տվյալ օրվա դրությամբ սպասարկողին պատկանող բոլոր ծրագրային կոդերը (source codes):

Սպասարկողի կողմից սահմանված ժամկետում պատվիրատուին է փոխանցում կատարված ծրագրային փոփոխությունների և նոր տարբերակների ծրագրային կոդերը (Սպասարկողին պատկանող) (source codes) արտաքին էլեկտրոնային կրիչի վրա:

Պատվիրատուի կողմից այլ կազմակերպության հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու դեպքում սպասարկողը (Պատվիրատուին պատկանող) ծրագրային կոդերը, տվյալների բազայի գաղտնաբառը, և սպասարկման համար անհրաժեշտ այլ տեղեկատվությունը փոխանցում է նոր սպասարկողին:

Անհրաժեշտության դեպքում պատվիրատուն իրավունք ունի հրավիրել նաև անկախ փորձագետների և իրականացնել ծրագրային կոդերի և Սերվերների անվտանգության վերլուծություն:

Կողմերը երաշխավորում են ծրագրի կոդերի տվյալների գաղտնիության ռեժիմի պահպանությունը: Կողմերն իրավունք չունեն առանց մյուս կողմի համաձայնության ծրագրի կոդերի տվյալները հայտնել կամ այլ ձևով փոխանցել երրորդ անձանց:

Պատվիրատուն իրավունք ունի Պայմանագրով մատուցված ծառայությունների արդյունքները ՀՀ օրենսդրությանը չհակասող ձևերով ու եղանակներով օգտագործել իր հայեցողությամբ, առանց որևէ սահմանափակման՝ չխախտելով հեղինակների անձնական ոչ գույքային իրավունքները:

Սպասարկողը երաշխավորում է, որ պատվիրատուին տրամադրված ծրագրային ապահովման օգտագործումը չեն խախտում և չեն խախտի որևէ երրորդ կողմի մտավոր սեփականության իրավունքը և այն ունի բոլոր անհրաժեշտ իրավունքները կամ միայն իր հաշվին գրավոր կապահովի իրավունքների բոլոր փոխանցումները և համաձայնությունները, որոնք անհրաժեշտ են մտավոր սեփականության իրավունքի տիրապետման և Պայմանագրում նշված երաշխիքների այլ փոխանցումների իրացման համար: Կապահովի բոլոր անհրաժեշտ գրավոր համաձայնագրերը, համաձայնությունները և իրավունքների փոխանցումն իր աշխատակիցներից և այլ անձանցից, որոնց ծառայություններն օգտագործվել են Ծրագրի մշակման համար:

Սպասարկողն ապահովում է Մոդուլի տվյալների փոխանցումը CAST համակարգ և «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի սերվեր (այսուհետ՝ Դատալեքս), իսկ Մոդուլի տվյալների փոխանցման վերջնական կարգավորումներից հետո շարունակում է ապահովել մոդուլի տվյալների ամբողջական փոխանցումը Դատալեքս:

Անհրաժեշտության դեպքում սպասարկողն աջակցում է Մոդուլի տվյալների փոխանցումը ամպային տիրույթ:

<u>Սպասարկման տեղեկատուի ծառայություն.</u>

Սպասարկող կազմակերպությունը պարտավոր է կազմակերպել սպասարկման տեղեկատուի ծառայություն, որը կաջակցի դատարանի աշխատակիցներին և դատավարության մասնակիցներին. ստացված զանգերի ընդունում, Մոդուլի աշխատանքի ընթացքում նրանց մոտ առաջացած հարցերի բավարարում, աշխատանքի ընթացքում ստեղծված խնդիրների լուծում՝ սեղմ ժամկետներում (եթե չկա անհնարինություն)

Սպասարկման տեղեկատուն պետք է հասանելի լինի առնվազն հետևյալ աշխատանքային ժամերին՝

9:00-ից մինչև 18:00, երկուշաբթիից ուրբաթ, բացի տոն օրերից: Ծառայության խորհրդատվությունը պետք է ապահովվի՝ կիրառելով հետևյալ կապի միջոցները.

- Հեռախոս, էլեկտրոնային փոստ և այլն
- Այցեր Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմին

Տեղում սպասարկման ծառայություն

- Օպերացիոն համակարգի, Ծրագրի շահագործման հետ կապված այլ ծրագրային ապահովում, տվյալների վերականգնում,
- Ծրագրերի տեղադրում, թեսթավորում,
- Տվյալների պահուստավորում,
- Խափանման հետ կապված խնդիրների լուծում, որոնք անհրաժեշտ են Մոդուլի վերականգնման, և (կամ) ձևափոխման համար,
- Սերվերների սպասարկում,
- Ջնջված ֆայլերի և տեղեկատվության վերականգնում (հնարավորության դեպքում),

Հեռակա սպասարկում.

Հեռակա սպասարկումը պետք է ապահովի Սերվերների և Մոդուլի հսկողությունը և անխափան աշխատանքը: Այս ծառայության կիրառումը հնարավորություն է տալիս իրականացնել ցանցի խնդիրների արագ ախտորոշում, կարգավորում, հեռակա սերվերների կառավարում, կապի առկայության նկատմամբ հսկողություն և այլն: Հեռակա սպասարկումը ներառում է Մոդուլի աշխատանքն ապահովող ցանցի սխալների հայտնաբերում, ծրագրային ապահովում, կարգավորում (ձևափոխում), սպասարկում և այլն: Հեռակա սպասարկումը Ծառայության հետ համատեղ իրականացվում է սպասարկողի գտնվելու վայրում՝ ապահովելով դրա անվտանգությունը, այդ թվում՝ բացառելով ցանկացած տեղեկատվության արտահոսք:

Հեռակա սպասարկումը պետք է ապահովի՝

- Սարքավորումների և ծրագրային ապահովման հետ կապված խնդիրների հայտնաբերում
- Անմիջական դիմելու տեխնոլոգիա
- Ծրագրային ապահովման տեղակայում
- Սերվերների ծրագրային սպասարկում (հնարավորության դեպքում օպերացիոն համակարգի ներդնում, թարմացում, փոփոխում և այլն)
- Պահուստային սերվերների ծրագրային սպասարկում
- Մոդուլի ադմինիստրացիա
- Անվտանգության ապահովում՝ բացառելով չարտոնված մուտքերի և տեղեկատվության արտահոսքի հնարավորությունը
- Մոդուլի անվտանգության վերանայում և օպտիմալացում
- Բազային վերարտադրման (ռեպլիկացիաների) ստուգում,

Հնարավորության դեպքում տվյալների պահուստավորում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 25փ. 25տ.
ՀՎՀՀ՝ 01555207
Հ/Հ՝ 1570003653770100
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Մանուկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 25 » փետրվարի 2026թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-26/11» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության													
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	72261160/5	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ («Էլեկտրոնային դատավարություն» քաղաքացիական մոդուլի սպասարկման ծառայություններ)	5 750 000	8 625 000	11 500 000	14 375 000	17 250 000	20 125 000	23 000 000	25 875 000	28 750 000	34 500 000	**34 500 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 25փ. 25տ.
ՀՎՀՀ՝ 01555207
Հ/Հ՝ 1570003653770100
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Մանուկյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«25» փետրվարի 2026թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-26/11» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«25» փետրվարի 2026թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-26/11» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« 25 » փետրվարի 2026թ. կնքված
«ԴԴ-ՄԱԾՁԲ-26/11» ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.